Ալեքսանդր Ծատուրյան

Գետակ

Քի՛չ էլ լացիր, գետա՛կ վճիտ, կարկաչուն,
Անկյանք ձըմռան ցուրտ կապանքը կըրելով.
Քի՛չ էլ սգա… և ուր որ է քեզ գարուն
Նոր կյանք կըտա՝ քո լաց-սուգին վերջ տալով:

Եվ ազատված սառցե մաշող կապանքից,
Նորից, գետա՛կ, կը թըռչկոտես համարձակ,
Եվ կարկաչըդ՝ ազատ ելած քո կըրծքից՝
Խոր անտառում կառնե ազատ արձագանք:

Քեզ վերևից կըփայփայե ժպտալով
Գարնան անամպ պարզ երկինքը կապուտակ.
Եվ դյութական հըրապուրիչ գույներով
Քո ջըրերում կըշողշողա արեգակ:

Եվ վաղորդյան հով զեփյուռը գարնային
Մեղմ կըհուզե մաքուր կուրծքդ կուսական.
Դալար ափիդ պարզ ժըպիտը երեսին,
Քեզ ամոթխած կ՝ողջունե հեզ շուշան:

Քի՛չ էլ լացիր, գետա՛կ վճիտ, կարկաչուն,
Դաժան ձըմռան ցուրտ կապանքը կըրելով.
Քի՛չ էլ, քի՛չ էլ… և ուր որ է վառ գարուն

Նոր կյանք կըտա՝ քո լաց-սուգին վերջ տալով…

1890, 10 նոյեմբերի